ԲԱՐԻ ՀՈՎԻՎԸ | ՆԱ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ.

Սաղ. 100:3 - 3 Ճանաչեցե՛ք, որ Տերն է Աստվածը. նա է մեզ արարել, և ոչ թե մենք. մենք նրա ժողովուրդն ենք և նրա արոտի ոչխարները:

Հով. 10:10-11 - 10 Գողը գալիս է միայն գողանալու, սպանելու եւ ոչնչացնելու համար. սակայն ես եկա, որ իմ ոչխարները կյանք ունենան եւ էլ աւելի ունենան: 11 Ես եմ բարի հովիւը. բարի հովիւն իր անձը դնում է ոչխարների համար:

Հով. 10:14 - 14 Ես եմ բարի Հովիւը, եւ ես իմիններին ճանաչում եմ, եւ իմիններիցն էլ ճանաչվում եմ:

Սաղ. 23:1-6 - 1 Տէրն է իմ հովիւը. եւ կարօտութիւն չեմ ունենալ: 2 Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ, եւ հանդարտ ջրերի մօտ՝ տանում է ինձ. 3 Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարութեան շաւիղներումը իր անունի համար: 4 Թէ եւ գնամ մահի շուքի ձորումը՝ չար բանից չեմ վախենալ. որովհետեւ դու ինձ հետ ես. քո գաւազանն ու քո ցուպը՝ նորանք մխիթարում են ինձ: 5 Դու իմ առաջին սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. դու իմ գլուխն օծում ես իւղով. իմ բաժակը խիստ լիքն է: 6 Հէնց բարիք եւ ողորմութիւն կգան իմ ետեւիցն իմ կեանքի բոլոր օրերումը. եւ Տիրոջ տանը կբնակուիմ շատ երկար ժամանակ:

Սա կյանքի, հանգստի և խաղաղության Սաղմոս է: Սա Սաղմոս է, որը բուժում է, ազատում և մխիթարում : 3000 տարվա վաղեմության համար այն չափազանց արդիական է այսօրվա մեր կյանքի համար:

Ոչխարը միակ կենդանին է որն ինքն իրեն չի կարող կերակրել: Նրան ինչ որ մեկը պետկ է առաջնորդի:

I. ՆԱ ՀՈԳՈՒՄ Է ՄԵՐ ԿԱՐԻՔՆԵՐԸ:
HE TAKES CARE OF OUR NEEDS

2 Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ, եւ հանդարտ ջրերի մօտ՝ տանում է ինձ.

- *Հովիվը երբեք իր ոչխարներին չի տանի դեպի արագ հոսող գետերը:*

Հայ. 7:17 - 17 Որովհետեւ Գառը՝ որ աթոռի մէջ է, կ'հովուէ նորանց եւ կ'առաջնորդէ նորանց դէպի կենդանի ջրերի աղբիւրներ. Եւ Աստուած կ'սրբէ ամեն արտասուքը նորանց աչքերիցը:

II. ՆԱ ԲՈՒԺՈՒՄ Է ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ:
HE HEALS AND RESTORES.

3 Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարութեան շաւիղներումը իր անունի համար:

Սաղ. 51:12 - 12 Դարձեալ տուր (Restore) ինձ քո փրկութեան ուրախութիւնը, եւ հոժարակամ հոգով հաստատիր ինձ:

Ժող. 3:1,4,8 - 1 Ամեն բանի ժամանակ կայ. Եւ ժամանակ՝ երկնքի տակի բոլոր ձեռնարկութեան: 4 Լալու ժամանակ, եւ ծիծաղելու ժամանակ. Սգալու ժամանակ, եւ պարելու ժամանակ. 8 Սիրելու ժամանակ, եւ ատելու ժամանակ. Պատերազմի ժամանակ, եւ խաղաղութեան ժամանակ:

Շրեկ անունով ոչխարի պատմությունը.

Մատթեոս 11.28-30-ում Հիսուսն ասում է. *«Ինձ մօտ եկէք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ կտամ ձեզ: Ձեզ վերայ առէք իմ լուծը եւ ինձանից սովորեցէք. որովհետեւ ես հեզ եմ եւ սրտով խոնարհ. եւ ձեր անձերի համար հանգստութիւն կգտնէք: Որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ:» Երբ մենք գալիս ենք Հովվի մոտ, Նա խոստանում է ազատել մեզ այդ ծանրությունից:*

*Ղուկ. 4:18 - Հոգին ինձ վերայ է. որի համար էլ օծեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին աւետարանելու, **սրտով կոտրուածներին բժշկելու**:*

Մատ. 12:20 - 20 Ջախջախուած եղէգը չի փշրիլ, եւ հանգչող պատրոյգը չի հանգցնիլ մինչեւ որ դատաստանը յաղթութեան հանէ:

III. Նա Իր Անունի համար է մեզ կանչել:
He called us for His Name's sake

3 Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարութեան շաւիղներումը իր անունի համար:

*Սաղ. 25:11 - Ով Տէր, **քո անունի համար** քավիր իմ անօրէնությունը, որ շատ է:*

*Սաղ. 31:3 - Որովհետեւ դու ես իմ վէմը եւ բերդը, եւ **քո անունի համար առաջնորդիր** ինձ եւ կառավարիր ինձ:*

Եզ. 39:25 - 25 Սորա համար այսպէս է ասում Տէր Եհովան. Հիմա ետ պիտի դարձնեմ Յակոբի գերութիւնը եւ պիտի գթամ Իսրայէլի բոլոր տանը, եւ պիտի նախանձեմ իմ սուրբ անունի համար:

IV. Նա ինձ առաջնորդում է արդարութեան ճանապարհով:
He leads us to the Paths of Righteousness.

3 Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարութեան շաւիղներումը իր անունի համար:

Հայ. 19:8 - 8 Եւ տրուեցաւ նորան որ սպիտակ սուրբ եւ լուսափայլ բեհեզ հագնի. (որովհետեւ բեհեզը սուրբերի արդարութինն է:)

Ես. 61:10 - 10 Ես ուրախութեամբ պիտի ուրախանամ Տէրովը, իմ անձը պիտի խնդայ իմ Աստուծովը. որովհետեւ նա ինձ փրկութեան հանդերձներ հագցրեց, արդարութեան պատմուճանը գցեց ինձ վերայ. ինչպէս մի փեսայ, որ դնում է իր խոյրը, եւ մի հարսի պէս՝ որ զարդարվում է իր զարդերովը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Նոր Կտակարանը հայտնում է Հիսուսին որպես Բարի հովիվ, Ավագ հովիվ, մեր հոգիների հովիվ և պահապան և հովիվ: